# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Մայիսի 5-ին, կիրակի.- Զ կիրակի զկնի Յարութեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***Մայիսի 9-ին, հինգշաբթի,- Խ օր Յինանց: Համբարձումն Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո Մայր Տաճարում կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Մայիսի 12-ին, կիրակի.- Է կիրակի զկնի Յարութեան: Երկրորդ Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Մայիսի 19-ին, կիրակի.- Հոգեգալուստ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ ընթերցվեց Ներսես Լամբրոնացու Ս. Հոգու Գալստյանը նվիրված ներբողյանը:

***Մայիսի 26-ին, կիրակի.- Ա կիրակի զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: